ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 08.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՄԻԿՈՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-25093-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ, Մարինե Ֆարմանյանի խորհրդի անդամներ՝ Դավիթ Վարդիկյանի, Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Ռուբեն Հակոբյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռոման Ահարոնյանի, Պավել Գյուլումյանի և Արսեն Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-25093-2-Ա որոշման բողոքարկումը,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

«Արարատմիլկ» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Հակոբյանը **(այսուհետև՝ Դիմող կամ Բողոք բերող անձ),** դիմելով ՀՀ փաստաբանների պալատին **(այսուհետև՝ Պալատ),** խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Մամիկոն Մանուկյանին:

Մամիկոն Մանուկյանին (**այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) վերագրվել է իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից անհիմն հրաժարվելու, ինչպես նաև պայմանագիրը լուծելիս փաստաթղթերը և պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու վարքագիծը:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 08.04.2026 թվականի թիվ ԿԳ-25093-2-Ա որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն» և 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստում «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.8.4 (1,3) ենթակետի պահանջների խախտման հատկանիշների մասով թիվ ԿԳ-25093 կարգապահական վարույթը կարճվել է:

Դիմողը Որոշման դեմ 02.07.2026թ. ներկայացրել է բողոք:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-ԿԳ-25093-2-Ա որոշման էությունը.</u>**

Հանձնաժողովը, **անդրադառնալով Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից անհիմն հրաժարվելու հարցին**, **Որոշմամբ նշել է հետևյալը**.

«(…) Գործում առկա նյութերով չի հաստատվել, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի կամ նրա ներկայացուցչի կողմից դրսևորվել է այնպիսի վարքագիծ, որը Կանոնագրքի 3.8.2 ենթակետի իմաստով կարող էր իրավաչափ հիմք հանդիսանալ Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու համար:

Ինչ վերաբերում է վճարման պարտավորությանը, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ Պայմանագրի 5-րդ կետով կողմերը հստակ սահմանել են վճարման կատարման ժամկետը՝ թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: Մինչդեռ Դիմումը ներկայացնելու պահին նշված քաղաքացիական գործը դեռևս ընթացքի մեջ է եղել, այսինքն՝ Պայմանագրով նախատեսված վճարման վերջնական ժամկետը դեռ վրա հասած չի եղել: Ուստի, անգամ այն պայմաններում, երբ կողմերի միջև առկա է վեճ Պայմանագրով նախատեսված գումարը վճարված լինելու կամ չլինելու վերաբերյալ, ապա այդ հանգամանքը տվյալ դեպքում ինքնին չի կարող գնահատվել որպես վստահորդի կողմից վճարումները կատարելուց հրաժարում կամ պայմանագրային պարտավորությունների կոպիտ խախտում, քանի դեռ պայմանագրով նախատեսված վճարման ժամկետը չի լրացել: Այլ կերպ՝ Փաստաբանը չէր կարող Պայմանագրի կատարումից հրաժարվելու հիմք դարձնել այնպիսի պարտավորության չկատարումը, որի կատարման ժամկետը Պայմանագրի համաձայն դեռ չէր առաջացել:

Հանձնաժողովը գտնում է, որ իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից Փաստաբանի միակողմանի հրաժարումը չի կարող իրականացվել այնպիսի պայմաններում, երբ հրաժարման համար Կանոնագրքով նախատեսված փաստական հիմքերը հաստատված չեն:»

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից պայմանագիրը լուծելիս փաստաթղթերը և պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու հարցին, Հանձնաժողովը արձանագրել է հետևյալը.

«(…) Տվյալ դեպքում Դիմողը պնդել է, որ Պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարել է, իսկ Փաստաբանը հերքել է գումար ստանալու հանգամանքը: Կարգապահական գործում առկա նյութերով չի ներկայացվել գումարի փոխանցման, վճարման կամ Փաստաբանի կողմից դրա ստացման փաստը հավաստող ապացույց: Հետևաբար, միայն Դիմողի պնդման հիման վրա հնարավոր չէ հաստատված համարել, որ Փաստաբանը ստացել է հոնորար, և որ նրա մոտ առաջացել է չկատարված աշխատանքի դիմաց ստացված հոնորարի համապատասխան մասը վերադարձնելու պարտականություն: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին, ուստի Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության խախտման փաստը կարգապահական գործում առկա ապացույցներով չի հաստատվել:»

«(…) Տվյալ դեպքում գործում առկա նյութերից հետևում է, որ Փաստաբանը 01.07.2025թ. հաղորդագրությամբ փաստացի հայտնել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից հրաժարվելու մասին: Հետագայում՝ 11.12.2025թ. ծանուցմամբ, Փաստաբանը հայտնել է, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կարող է ներկայանալ փաստաբանական գրասենյակ և ստանալ գործով առկա փաստաթղթերը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ընդունել է, որ ստացել է նշված ծանուցումը, սակայն պարզաբանել է, որ փաստաթղթերը ստանալու համար փաստաբանական գրասենյակ չի ներկայացել՝ կողմերի միջև հնարավոր վեճից խուսափելու նկատառումով, ինչի կապակցությամբ խնդրել է փաստաթղթերն ուղարկել փոստային եղանակով, իսկ Փաստաբանը նշել է, որ փաստաթղթերը գրասենյակից ստանալու վերաբերյալ ծանուցումից հետո որևէ արձագանք չի ստացել: Այս մասով Հանձնաժողովն արձանագրում է, որ կողմերի դիրքորոշումները հակադիր են. Դիմողը պնդել է, որ խնդրել է փաստաթղթերն ուղարկել փոստային եղանակով, իսկ Փաստաբանը նշել է, որ փաստաթղթերը գրասենյակից ստանալու վերաբերյալ ծանուցումից հետո որևէ արձագանք չի ստացել:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը գտնում է, որ միայն այն հանգամանքը, որ փաստաթղթերը Դիմողի նախընտրած եղանակով՝ փոստային առաքմամբ, չեն ուղարկվել, ինքնին բավարար չէ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության խախտում արձանագրելու համար: Նշված խախտումը հաստատված համարելու համար անհրաժեշտ էր ապացուցել, որ Փաստաբանը հրաժարվել է վերադարձնել փաստաթղթերը, կամ այլ կերպ խոչընդոտել է վստահորդի կողմից դրանց ստացմանը:

Բացի այդ, նկատի ունենալով, որ 11.12.2025թ. ծանուցմամբ Փաստաբանը հայտնել է փաստաթղթերը վերադարձնելու պատրաստակամության մասին, Հանձնաժողովը գալիս է

այն եզրահանգման, որ Փաստաբանի վարքագծում առնվազն չի հաստատվում փաստաթղթերը վերադարձնելու պարտականությունից խուսափելու կամ դրանց վերադարձը խոչընդոտելու հանգամանքը: Այս համատեքստում Հանձնաժողովը կարևորում է նաև, որ փաստաթղթերի վերադարձի փաստացի իրականացումը ենթադրում է նաև վստահորդի կողմից ողջամիտ համագործակցություն և առաջարկված եղանակով փաստաթղթերը ստանալու հնարավորությունից օգտվելը: Մինչդեռ տվյալ դեպքում Դիմողը չի ներկայացել փաստաբանական գրասենյակ և չի օգտվել Փաստաբանի կողմից առաջարկված եղանակով փաստաթղթերը ստանալու հնարավորությունից:»

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Դիմողը 02.07.2026թ. ներկայացրած բողոքով հայտնել է իր անհամաձայնությունը Որոշման հետ:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանի կատարած արարքի և Հանձնաժողովի կողմից կիրառված կարգապահական տույժերը մեղմ են:

Ըստ Դիմողի, Հանձնաժողովը արձանագրել է, որ Փաստաբանի և Դիմողի կնքված պայմանագրի արժեքը կազմել է 800.000 ՀՀ դրամ: Հանձնաժողովին ներկայացված պայմանագրի պատճենը միտումնավոր այնպես է արված, որ գումարի չափը չի երևում: Դիմողը նշել է, որ իր կողմից թիվ ԵԴԿ/4057/02/15 դատական գործից հանված օրինակում երևում է, որ ծառայության վճարի գինը՝ 1.000.000 ՀՀ դրամ է:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը Հանձնաժողով և դատարան ներկայացրել է տարբեր պայմանագրեր:

Դիմողը, վերահաստատելով իր նախկին դիրքորոշումները, խնդրել է դադարեցնել Փաստաբանի արտոնագրի գործունեությունը:

Դիմողը նաև տեղեկացրել է, որ Փաստաբանը չի փոխանցել գործի նյութերը:

4. **<u>Փաստաբան Մամիկոն Մանուկյանի դիրքորոշումը</u>**.

Փաստաբան Մամիկոն Մանուկյանին առաջարկվել է Օրենքի 39.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ներկայացնել դիրքորոշում «Արարատմիլկ» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Հակոբյանի՝ 02.07.2026թ. բողոքի վերաբերյալ:

Փաստաբան Մամիկոն Մանուկյանը որևէ դիրքորոշում կամ գրավոր բացատրություն չի ներկայացրել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Մամիկոն Մանուկյանը ստանձնել է «Արարատմիլկ» ՍՊԸ-ի իրավունքների պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է 03.11.2016թ. Փաստաբանի և Անդրանիկ Հակոբյանի միջև կնքված իրավաբանական ծառայությունների*

մատուցման պայմանագրի պատճենով (**այսուհետև՝ Պայմանագիր**), *ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել իրավաբանական ծառայություն, այն է՝ ՀՀ դատարաններում քննվող թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում իրականացնել Պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա համար՝ նույն պայմանագրին համապատասխան: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճենով:*

3. Պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ սույն Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված վճարումը Պատվիրատուն կատարում է թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց՝ երկամսյա ժամկետում: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճենով:*

4. Դիմողի կողմից դիմումը ներկայացնելու պահին թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործը դեռևս ընթացքի մեջ է եղել: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. Դիմողը պնդել է, որ Պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարել է, իսկ Փաստաբանը հերքել է գումար ստանալու հանգամանքը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. Փաստաբանը հրաժարվել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց՝ միակողմանի լուծելով Պայմանագիրը: *Սույն փաստը հաստատվում է 01.07.2025թ. հաղորդագրության լուսապատճենով:*

7. 11.12.2025թ. գրությամբ Փաստաբանը հայտնել է, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կարող է ներկայանալ փաստաբանական գրասենյակ՝ փաստաթղթերը ստանալու համար: *Սույն փաստը հաստատվում է պայմանագիրը լուծելու և իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին ծանուցման պատճենով:*

5. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ***բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 39.10 **հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) ***նկատողություն****.*

2) խիստ նկատողություն.

3) ***լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել****.*

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 **հոդվածի** 2-**րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Վերոնշյալ իրավական նորմերի համակցված մեկնաբանությունից հետևում է, որ Պալատը փաստաբանների մասնագիտական և ինքնակառավարվող միավորում է, որի խնդիրներից է փաստաբանների իրավաչափ և մասնագիտական վարքագծի կանոններին համապատասխանող գործունեության ապահովումը: Նշված խնդիրը, ի թիվս այլնի, իրացվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ իրականացնելու և համապատասխան հիմքերի առկայության դեպքում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով:

Օրենքով սպառիչ սահմանված են կարգապահական պատասխանատվության այն միջոցները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգապահական խախտում կատարած փաստաբանի նկատմամբ: Միաժամանակ Օրենքով սահմանված են պատասխանատվության անհատականացման չափանիշները, որոնց գնահատմամբ պետք է որոշվի կիրառման ենթակա տույժի տեսակը:

Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից հետևում է, որ վերջինս յուրաքանչյուր գործով պարտավոր է փաստաբանի վարքագիծը գնահատել Օրենքի և Կանոնագրքի պահանջների համատեքստում, պարզել կարգապահական խախտման բնույթը և հաստատված խախտմանը համապատասխան կիրառել համաչափ կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավունքների սահմանափակումների իրավաչափության գնահատման համատեքստում առանձնացրել է նպատակի իրավաչափությունը, ինչպես նաև հետապնդվող իրավաչափ նպատակի և դրա իրականացման համար ընտրված միջոցի միջև ողջամիտ համաչափության առկայությունը (Case of Khalfaoui v. France, 14.03.2000):

Տվյալ դեպքում Փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավաչափ նպատակը բխում է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդրից՝ ապահովել փաստաբանների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իր հերթին ընտրված կարգապահական տույժի համաչափությունը ենթակա է գնահատման Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անհատականացման չափանիշների՝ կատարված խախտման բնույթի, դրա հետևանքների, Փաստաբանի մեղքի աստիճանի, անձը բնութագրող տվյալների և առկա կարգապահական տույժերի համակցության հիման վրա:

Մեղքի աստիճանը.

Կարգապահական տույժի տեսակը որոշելիս Հանձնաժողովը հաշվի է առել հաստատված կարգապահական խախտման բնույթը և այն հանգամանքը, որ Փաստաբանն առանց Կանոնագրքով նախատեսված բավարար հիմքերի միակողմանի հրաժարվել է իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից:

Կարգապահական խախտման հետևանքները.

Խորհուրդը, գնահատելով կարգապահական գործում առկա նյութերը, արձանագրում է, որ թեև Փաստաբանը խախտել է իր մասնագիտական պարտականությունները, այդուհանդերձ գործով չի հաստատվել, որ նրա վարքագծի հետևանքով Դիմողը զրկվել է իր իրավունքների պաշտպանության հնարավորությունից կամ կրել է այնպիսի ծանր և անդառնալի իրավական հետևանքներ, որոնք հաստատված խախտման բնույթի համեմատ կպահանջեին առավել խիստ կարգապահական պատասխանատվություն:

Փաստաբանի անձը, **կարգապահական վարույթները և առկա տույժերը**.

Հանձնաժողովը հաշվի է առել նաև Փաստաբանի անձը բնութագրող տվյալները: Մասնավորապես, կարգապահական գործում առկա տեղեկանքի համաձայն՝ 2021-2026 թվականների ընթացքում Փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել:

Նշված հանգամանքը, Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան, իրավաչափորեն գնահատվել է որպես պատասխանատվության անհատականացման չափանիշ և հաշվի է առնվել կիրառման ենթակա կարգապահական տույժի տեսակը որոշելիս:

Խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքների համակցված գնահատման արդյունքում Հանձնաժողովի կողմից որպես հիմնական կարգապահական տույժ «նկատողություն» կիրառելը և որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականություն սահմանելը համապատասխանում են Օրենքի 39.10-րդ հոդվածի պահանջներին և հաստատված կարգապահական խախտման բնույթին:

«Նկատողություն» կարգապահական տույժը տվյալ դեպքում արտահայտում է Փաստաբանի վարքագծին տրվող բացասական կարգապահական գնահատականը, իսկ լրացուցիչ վերապատրաստումը հետապնդում է մասնագիտական վարքագծի հետագա շտկման և նմանատիպ խախտումների կանխարգելման նպատակ: Հետևաբար ընտրված միջոցների համակցությունն ունի ինչպես պատասխանատվության, այնպես էլ կանխարգելիչ և մասնագիտական բնույթի ուղղիչ նշանակություն:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը եզրահանգում է, որ Հանձնաժողովի կողմից կիրառված կարգապահական տույժերը համաչափ են հաստատված խախտմանը:

Անդրադառնալով Դիմողի այն փաստարկին, որ Հանձնաժողովին ներկայացված պայմանագրի պատճենում ծառայության արժեքը տեսանելի չէ, մինչդեռ իր ներկայացրած պայմանագրում նշված է 1.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև այն պնդմանը, որ Փաստաբանը Հանձնաժողովին և դատարանին ներկայացրել է տարբեր պայմանագրեր՝ Խորհուրդը գտնում է, որ նշված հանգամանքները սույն կարգապահական գործով քննության առարկա հարցի լուծման համար ինքնին որոշիչ իրավական նշանակություն չունեն:

Տվյալ դեպքում քննության առարկան պայմանագրով սահմանված վարձատրության չափը չէ: Քննության առարկան այն է, թե կարգապահական գործում առկա՞ են արդյոք բավարար ապացույցներ հաստատված համարելու համար, որ Փաստաբանը փաստացի ստացել է հոնորար, որի հետևանքով նրա մոտ առաջացել է չկատարված աշխատանքի դիմաց ստացված գումարի համապատասխան մասը վստահորդին վերադարձնելու պարտականություն:

Ինչպես իրավացիորեն արձանագրել է Հանձնաժողովը, Դիմողը կարգապահական վարույթի ընթացքում պնդել է, որ Փաստաբանին վճարել է 800.000 ՀՀ դրամ, մինչդեռ Փաստաբանը հերքել է որևէ գումար ստանալու հանգամանքը: Ընդ որում, Փաստաբանը որևէ փուլում չի հայտնել, որ Պայմանագրով նախատեսված վարձատրության չափը կազմել է 800.000 ՀՀ դրամ: Նշված գումարի վերաբերյալ տվյալը հիմնված է բացառապես Դիմողի պնդման վրա:

Միաժամանակ բողոքում Դիմողը հղում է կատարել թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործից ստացված Պայմանագրի օրինակին, որում ծառայության արժեքը նշված է 1.000.000 ՀՀ դրամ: Այսպիսով՝ 800.000 և 1.000.000 ՀՀ դրամ գումարների միջև տարբերությունը վերաբերում է ոչ թե Փաստաբանի կողմից ներկայացված հակասական բացատրություններին, այլ Դիմողի՝ տարբեր փուլերում ներկայացրած տվյալներին. սկզբնապես Դիմողը պնդել է, որ Փաստաբանին վճարել է

800.000 ՀՀ դրամ, իսկ բողոքում ներկայացրել է պայմանագրի օրինակ, որում վարձատրության չափը նշված է 1.000.000 ՀՀ դրամ:

Այդուհանդերձ, նշված տարբերությունն ինքնին չի հաստատում ո՛չ Փաստաբանի կողմից տարբեր պայմանագրեր ներկայացնելու վերաբերյալ պնդումը, ո՛չ էլ պայմանագրով նախատեսված որևէ գումարի փաստացի վճարումն ու Փաստաբանի կողմից դրա ստացումը: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ Դիմողը սկզբնապես պնդել է 800.000 ՀՀ դրամ վճարելու մասին, իսկ բողոքին կից ներկայացված Պայմանագրի օրինակում ծառայության արժեքը նշված է 1.000.000 ՀՀ դրամ, ապացուցված չէ սույն հարցի լուծման համար որոշիչ փաստը՝ Փաստաբանի կողմից որևէ հոնորար ստանալը:

Հոնորարի փաստացի ստացումը հաստատված չլինելու պայմաններում հնարավոր չէ հաստատված համարել նաև չկատարված աշխատանքի դիմաց ստացված հոնորարի համապատասխան մասը վստահորդին վերադարձնելու պարտականության առաջացումը:

Ուստի Դիմողի փաստարկները չեն հերքում Հանձնաժողովի այն եզրահանգումը, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ նախատեսված խախտումը կարգապահական գործում առկա ապացույցներով չի հաստատվել:

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Փաստաբանը չի փոխանցել գործի նյութերը, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված փաստարկը ևս չի հիմնավորում Հանձնաժողովի Որոշումը վերացնելու անհրաժեշտությունը:

Հանձնաժողովը իրավացիորեն արձանագրել է, որ կարգապահական գործում առկա նյութերից հետևում է, որ Փաստաբանը 01.07.2025թ. հայտնել է իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելու մասին, իսկ հետագայում՝ 11.12.2025թ. գրությամբ տեղեկացրել է, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կարող է ներկայանալ փաստաբանական գրասենյակ և ստանալ գործով առկա փաստաթղթերը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողը չի վիճարկել նշված ծանուցումն ստանալու փաստը՝ ընդունելով, որ այն ստացել է, սակայն հայտնել է, որ փաստաբանական գրասենյակ չի ներկայացել և խնդրել է փաստաթղթերն ուղարկել փոստային առաքմամբ: Փաստաբանն իր հերթին նշել է, որ ծանուցումն ուղարկելուց հետո Դիմողից որևէ արձագանք չի ստացել: Հետևաբար կողմերի միջև առկա հակասությունը վերաբերել է փաստաթղթերի փոխանցման եղանակին, այլ ոչ թե դրանք վերադարձնելու պատրաստակամությանը: Փաստաթղթերը Դիմողի նախընտրած եղանակով չուղարկելու փաստը չի կարող նույնացվել Փաստաբանի կողմից դրանց վերադարձից հրաժարվելու կամ դրանց ստացումը խոչընդոտելու հետ:

Խորհուրդը համամիտ է Հանձնաժողովի այն եզրահանգման հետ, որ միայն այն հանգամանքը, որ փաստաթղթերը չեն ուղարկվել Դիմողի նախընտրած եղանակով՝ փոստային առաքմամբ, ինքնին բավարար չէ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերությամբ նախատեսված խախտումը հաստատված համարելու համար:

Կարգապահական գործում առկա չեն բավարար ապացույցներ, որ Փաստաբանը, փաստաթղթերը գրասենյակից ստանալու առաջարկից հետո, հրաժարվել է դրանք

տրամադրելուց կամ որևէ գործողությամբ սահմանափակել է դրանց ստացման հնարավորությունը:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովն իրավացիորեն եզրահանգել է, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերությամբ նախատեսված խախտումը սույն կարգապահական գործում չի հաստատվել:

Այսպիսով՝ Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Հանձնաժողովի կողմից սույն գործով կատարվել է պատշաճ քննություն, նյութական իրավունքի նորմերը մեկնաբանվել և կիրառվել են ճիշտ կերպով, ինչի արդյունքում կատարվել են իրավաչափ եզրահանգումներ և կայացվել է իրավաչափ Որոշում, որը ներկայացված Բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ենթակա չէ վերացման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը՝**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 08.04.2026 թվականի «Փաստաբան Մամիկոն Էդուարդի Մանուկյանի (արտոնագիր՝ թիվ 349) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25093-2-Ա որոշման դեմ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Հակոբյան կողմից 02.07.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 08.04.2026 թվականի թիվ ԿԳ-25093-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Մարինե Ֆարմանյան**

02 օգոստոսի 2026թ.
թիվ ԿԳ/21-Ա
ք. Երևան